ԱԼԻՔ

Ազգային, հասարակական, քաղաքական, մշակութային օրաթերթ

92-ՐԴ ՏԱՐԻ, ԹԻՒ 48 (24601), հատավաճառ՝ 20000 ռիալ

سال نودودوم - شماره (۲۴۶۰۱) ۴۸ - تکشماره ۲۰۰۰۰ ریال - ۸ صفحه

ԿԻՐԱԿԻ

3 ՄԱՐՏԻ 2024

آلیک

یکشنبه – ۱۳ اسفند ۱۴۰۲

روزنامه سیاسی، اجتماعی، فرهنگی

E-mail: info@alikonline.ir www.alikonline.ir

ՆԱԽԱԳԱՀ ՌԷՅԻՍԻՆ ՍՈՒՐ ՔՆՆԱԴԱՏՈՒԹԵԱՆ Է ԵՆԹԱՐԿԵԼ ԻՍՐԱՅԵԼԻ ՀԵՏ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐ ՊԱՀՊԱՆՈՂ ԻՍԼԱՄԱԿԱՆ ԵՐԿՐՆԵՐԻՆ

«ԱԼԻՔ» - Հանրապետութեան նախագահ այաթ. Մէյէդ Էբրահիմ Ռէյիսին սուր քննադատութեան է ենթարկել որոշ իսլամական երկրների, որոնք տնտեսական յարաբերութիւններ ունեն Իսրայէլի հետ Գազայի հատուածում պատերազմի ֆոնին: Հաղորդում է «Մեհր»-ը:

Այդ մասին նա յայտարարել է Կատարի էմիր Թամիմ բին Համադ ալ Թանիի հետ Ալժիրում, գազ արտահանող երկրների 7-րդ ֆորումի առաջնորդների գագաթնաժողովի շրջանակում կայացած հանդիպմանը:

Խօսելով Գազայի հատուածում Իսրայէլի գործողութիւնների մասին՝ Իրանի նախագահը քննադատել է որոշ իսլամական երկրների անտարբերութիւնն ու անգործութիւնը:

«Ռիադում Իսլամական համագործակցութեան կազմակերպութեան արտակարգ նիստից յետոյ ոչ մի արդիւնաւէտ քայլ չի ձեռնարկուել Գազայում սիոնիստների կատարած յանցագործութիւնները կասեցնելու համար: Մինչդեռ տարածաշրջանային որոշ կառավարութիւնների տնտեսական յարաբերութիւնները սիոնիստական ռեժիմի հետ շարունակւում են»,- ասել է նա:

Ռէյիսին իր խորն ափսոսանքն է յայտնել, որ տարածաշրջանի կառավարութիւնները «պաղեստինեան խնդրի լուծման հարցում ընկել են անգործութեան եւ չափից դուրս պահպանողականութեան մէջ»:

«Մինչ պաղեստինեան մահմեդական ազգն այսօր ակնկալում է գործնական եւ արդիւնաւէտ գործողութիւններ իսլամական կառավարութիւններից, կարելի է տեսնել, որ որոշ արաբական եւ իսլամական պետութիւններ անտարբեր են պաղեստինեան խնդրի նկատմամբ: Ինչպիսի՞ն է իրենց ժողովուրդների արձագանգը Պաղեստինի ճնշուած ժողովրդի կոտորածին»,- ասել է նա:

Ատրպատականի հայոց թեմի առաջնորդը շնորհաւորեց Իրանի Իսլամական խորհրդարանի նորընտիր զոյգ պատգամաւորներին



Ատրպատական, ազգային առաջնորդարան, Թաւրիզ - Ատրպատականի հայոց թեմի առաջնորդ՝ Տ. Գրիգոր արք. Չիֆթճեանը, խորհրդարանական ընտրութիւններից անմիջապէս յետոյ, շաբաթ, մարտ 2-ին, շնորհաւորական նամակներ է յղել Իրանի Իսլամական խորհրդարանում հայ զոյգ պատգամաւորներին, Թեհրանի եւ հիւսիսային իրանահայութեան պատգամաւոր դոկտ. Արա Շահվերդեանին եւ Սպահանի ու հարաւային իրանահայութեան պատգամաւոր Գեղարդ Մանսուրեանին, նրանց ընտրութեան առիթով:

Սրբազան Հայրը դոկտ. Շահվերդեանի վերընտրութեան ուրախ առիթով շեշտում է այն հետեւողական աշխատանքը, որը նա կատարել էր հայ համայնքի կեանքում անցնող չորս տարիների ընթացքում, եւ որ չէր վրիպել մեր ժողովրդի զաւակների ուշադրութիւնից. «Արդարեւ անցած չորս տարիները վկայ են Ձեր նուիրեալ աշխատանքին, որի անդրադարձը մամուլով, համացանցային եւ հասարակական ցանցերի տարբերակներով, օրը օրին տեղեկացւում էր մեր ժողովրդի զաւակներին: Համարատութիւնը ամենապարկեշտ արարքներից է, որ պատասխանատուութիւն ստանձնած անձը կատարում է, ի շահ իրեն, եւ իրեն վստահած ժողովրդին: Նոյն գիտակցութեամբ գործեցիք Դուք անցած շրջանում, եւ շահեցիք մեր ժողովրդի անվերապահ վստահութիւնը»,- աւում է Սրբազան Հօր շնորհաւորական ուղերձում:

Շնորհաւորական նոյն խնդութեամբ, Սրբազան Հայրը ուղերձ է յղել Սպահանի եւ հարաւային իրանահայութեան նորընտիր պատգամաւոր Գեղարդ Մանսուրեանին, աշխատանքային բարեբեր ճանապարհ մաղթելով նրան. «Ի սպաս ժողովրդի կատարուած ծառայութիւնը, անձնուիրութեան համազօր գործունէութիւն է, որը այնքան սիրով ու խանդաղատանքով կատարում են Ձեզ նման ազգային դաստիարակութիւն ստացած անձինք: Վստահ ենք, որ համարատութեան ոգով, նուիրումով ու ծառայական բարձր գիտակցութեամբ կատարելու էք Ձեզ վստահուած այս յոյժ կարեւոր պաշտօնը, ի շահ Իրանի Իսլամական Հանրապետութեան եւ ի շահ դրա անբաժան մասնիկը հանդիսացող իրանահայութեան»,- աւում է Սրբազան Հօր նամակում:

Վերջապէս, Սրբազան Հայրը Ատրպատականի հայոց թեմի Պատգամաւորական ժողովի, Թեմական խորհրդի, ազգային բոլոր կառոյցների անունից եւ անձնապէս շնորհաւորել է զոյգ պատգամաւորներին, արդիւնաշատ աշխատանք մաղթելով նրանց:

Գեղամ Մանուկեան.

«Հայկական դիւանագիտութեան ամօթի օրը. անգրագէտների ու փառամոլների այս բանակը փոշիացրեց հայկական դիւանագիտութեան ողջ աշխատանքը»

Մարտի 2-ին, երբ թուրքական Անթալիայում Հայաստանի արտգործնախարարն ու ընկերակիցները դիֆերամբներ էին ձօնում հայ-թուրքական չգործող յարաբերութիւնների, ընթացքի ու ապագայի մասին, Հայաստանում, Կառավարութեան 2012 թ.-ի որոշմամբ, պաշտօնապէս նշւում էր Հայ դիւանագէտի օրը: Այս մասին գրում է ՀՅԴ անդամ, ՀՀ ԱԺ «Հայաստան» խմբակցութեան պատգամաւոր Գեղամ Մանուկեանը:

«Ցաւօք, մասնագիտական տօնին չեղած շնորհաւորանքներին զուգահեռ Անթալիայում ու դրանից առաջ էլ Բեռլինում հերթական անգամ նորանկախ Հայաստանի դիւանագիտութեան երեսնամեայ պատմութիւնն իջեցնում էին շրիշակից էլ ցածր մակարդակի:

Միայն մի քանի փաստի արձանագրում.

Նիկոլական իշխանութիւնը գլխատեց հայկական դիւանագիտական ընտանիքը, տասնեակ փորձառու դիւանագէտներ ոչ միայն դուրս են մղեցել համակարգից, այլեւ՝ հրապարակային ընդդիմանում են ներկայիս վիճակին:

Բեռլինում, Ադրբեջանի հետ բանակցութիւններին նստած հայկական թիմում եղածներից որեւէ մէկը չունի դիւանագիտական փոքր ի շատէ երկարատեւ փորձառութիւն:

Աւելին՝ Արարատ Միրզոյեանի ընկերները՝ փոխնախարար (ծառայութիւնից խուսափած) Արարատ Կոստանեանն ու Դաւիթ Կարապետեանը նրա հետ ճանապարհորդում են 2018-ի ցոյցեր-փոխվարչապետ-ԱԺ նախագահ-ԱԳ նախարարութիւն երթուղով:

Դէ, Ռուբէն Ռուբինեանն ու Գերմանիայում ներկայիս դեսպանն էլ՝ ոնց պատահի, ոնց Նիկոլը յանձնարարի:

Անփորձների այս շրջանակում դիւանագիտական համակարգային յիշողութեան բացակայութեան պայմաններում է, որ Ռուբինեանը անցեալից անտեղեակ յայտարարութիւններ է անում ու փոշիացնում անգամ անցնող երեսնամեակի դիւանագիտական ձեռքբերումները:

Փառամոլութեամբ աննախադէպ յայտարարում, թէ 2023-ին Թուրքիայում տեղի ունեցած երկրաշարժի պատճառով 30-տարուայ մէջ առաջին անգամ բացւեց հայ-թուրքական սահմանը: Չգիտենալով, որ այդ սահմանը պարբերաբար բացւել է, անգամ ՀՀ բարձրաստիճան պաշտօնեաների համար:

Անգրագիտութիւնն այնքան է իշխում, որ Ռուբինեանն Անթալիայում չի էլ գիտակցում, որ Թուրքիայի հետ սահման բացելու հարց չկայ, Անկարան է 1993 թւականին փակել սահմանը եւ իրենք պէտք է բացեն:

Այնքան անգրագէտ են գործել, որ փոշիացնելով հայկական դիւանագիտութեան ողջ վաստակը, անցնող տարիներին թոյլ են տւել ու հիմա էլ ԵՄ յատուկ ներկայացուցիչ Տոյւօ Կլաարի շուրթերով ու որոշմամբ համաձայնւում են տարածաշրջանում Թուրքիայի գերիշխող դիրքի պաշտօնականացմանը:

Անգրագէտների ու փառամոլների այս բանակը փոշիացրեց հայկական

(Շար. 8-րդ էջում)

«Ռաբիս... ռաբիսութիւն... քաղհան անող չկայ, մոլախոտը կերել է ամէն ազնիւ բան: Ռաբիսութիւնը աղտոտել է հայոց ազգային երաժշտութիւնը, ժանգով պատել արուեստը, գրականութիւնը, կենցաղը, հայոց լեզուն: Երկար տեւող հիւանդութեան պէս բան է, որին սովորել ենք, հանդուրժում ենք, դարձրել ենք մերը: Ռաբիսութիւնը վարքագիծ, պահւածք, մտածելակերպ է: Ամէն տեղ բուսած շօշափուկներով կառչել է հայոց ամբողջականութեանը, քաշում է ցած, ցած, ցած... մինչեւ ո՞ւր...»

Սօս Սարգսեան (1929-2013), թատրոնի եւ կինոյի հայ մեծանուն դերասան

Մէջբերումը՝ նրա «Վարագոյրից այն կողմ» գրքից



ARAM®
coffee
ԱՐԱՄ
قهوه آرام
սուրճ
فروشگاه مرکزی:
قائم مقام فراهانی–شماره ۶۴
88303478 եւ 88308730
www.aramcoffee.com
instagram:aram__coffee

Ալեքսէյ Լէօնկովը՝ Զելենսկիի՝ Երեւան հաւանական այցի մասին.

«Դա կը թաղի Հայաստանի եւ Ռուսաստանի յարաբերութիւնները»

Ռուս ռազմական փորձագէտ Ալեքսէյ Լէօնկովը Alpha News-ին մեկնաբանել է ՀԱՊԿ-ից Հայաստանի հնարաւոր դուրս գալը, ինչպէս նաեւ Ուկրաինայի նախագահ Վլադիմիր Զելենսկու այցը Հարաւային Կովկաս։

«Փաշինեանը մի կողմից կտրուկ շարժումներ չի անում, որովհետեւ, ըստ երեւոյթին, մինչեւ վերջ վստահ չէ որպէս քաղաքական գործիչ իր ապագայի հարցում, քանի որ իրավիճակն այնպիսին է, որ նա խաղում է երկու կրակի միջեւ։ Եթէ Արեւմուտքն Ուկրաինայում վերջնականապէս պարտի Ռուսաստանին, ապա նրա որոշումն, ինչպէս ասում են, անխոհեմ կը լինի, եւ նրան էլ կը հետապնդի։

Բայց Փաշինեանն իրականում չի ընտրում։ Նա գնում է մի ծրագրով, որի համար նրան բերել են իշխանութեան։ Այսինքն՝ գլխաւոր խնդիրն է Հայաստանը մեկուսացնել Ռուսաստանի հետ համագործակցութիւնից։ Եւ ահա այս բոլոր իրադարձութիւնները, որոնք տեղի են ունեցել Հայաստանում նրա մասնակցութեամբ, աստիճանական քայլեր են, որոնք յանգեցրել են եւ կը յանգեցնեն այն արդիւնքին, որի մասին երազում են անգլոսաքսերը»,- կարծում է փորձագէտը։

Ըստ քաղաքագէտի՝ Հայաստանի ուղեգծի փոփոխութիւնը պարզ դարձաւ դեռեւս ԱՄՆ պատուիրակութիւնների այցի ժամանակ, իսկ իրավիճակը լրացրեցին Եւրոպական ինտեգրացիոն գործընթացներում Հայաստանի ընդգրկման վերաբերեալ Եւրոմիութեան առաջարկները։

«Երբ Ամերիկայի Միացեալ Նահանգների ներկայացուցիչները գալիս էին Հայաստան, այդ ամէնը խօսում էր այն մասին, որ Հայաստանը դուրս կը գայ ՀԱՊԿ-ի կազմից եւ, ամենայն հաւանականութեամբ, կը խզի բոլոր կապերը Ռուսաստանի հետ։ Բացի այդ, այժմ Հայաստանին առաջարկներ են արուել Եւրոմիութեան կողմից Բորելի՝ դիւանագիտութեան գծով նրանց գլխաւորի շուրթերով։ Այս բոլոր առաջարկները յիշեցնում են այն առաջարկները, որոնք արուել են նաեւ Ուկրաինային։

Այնտեղ խոստացել են առանց վիզայի, այսինքն՝ ազատ տեղաշարժ Եւրոմիութեան երկրներում։ Այնտեղ խօսւում է այն մասին, որ Հայաստանը կընդգրկի եւրոպական ժողովուրդների եղբայրական ընտանիքում՝ որպէս թեկնածու, բայց միեւնոյն ժամանակ նա կը մասնակցի ԵՄ ղեկավարութեան ներքոյ իրականացւող բոլոր առաքելութիւններին եւ գործողութիւններին։ Նրան առաջարկում են ընդգրկուել որոշ էներգետիկ նախագծերում, որոնք կանցնեն Հայաստանի տարածքով։ Միգուցէ դա խողովակաշարեր է կամ որեւէ այլ բան։ Բայց բոլորը հասկանում են, որ այս առաջարկը պարզապէս ենթադրում է Հայաստանի տարածքում առկայ բոլոր ազգային հզօրութիւնների գնում»,- ասել է Լէօնկովը։

Ինչ վերաբերում է Զելենսկու այցին, Alpha News-ի զրուցակցի կարծիքով՝ այդ յայտարարուած այցը Հայաստան ոչ մի լաւ բան չի բերի երկու երկրների յարաբերութիւններին եւ խոստանում է վերջնական տարաձայնութիւն Հայաստանի եւ Ռուսաստանի միջեւ։

«Եթէ Զելենսկին գայ Հայաստան, այդպիսով Հայաստանը լիովին կը ցուցաբերի իր հակառուսական դիրքորոշումը։ Բոլորը գիտեն, որ Զելենսկին գնում է Ռուսաստանի թշնամիների մօտ, որոնց մենք անւանում ենք ոչ բարեկամ երկրներ։ Եւ նրա գալը Հայաստան ոչ այլ ինչ է, քան նոյն փաստի արձանագրում։ Այսինքն՝ դա կը լինի այն, հաւանաբար, վերջնական կէտը, որը կը թաղի Ռուսաստանի եւ Հայաստանի դարաւոր յարաբերութիւնները», - եզրափակել է Ալեքսէյ Լէօնկովը։

Ուկրաինացիները «վերջանո՞ւմ են», արդեօք ժամանակն է «պատերազմելու մինչեւ վերջին հայը»

Եւրոմիութեան կողմից Հայաստանի համար նախատեսւող ապագայի ուրւագծերն արդէն ակնյայտ են

Քաղաքագէտ Բենիամին Մատթէոսեանը Alpha News-ի եթերում «Վերնագիր» հեղինակային հաղորդման ընթացքում ներկայացրել է թեմայի շուրջ մասնագիտական վերլուծութիւն, որում մասնաւորապէս ասում է.

«Յաճախ բախւում ենք մի իրավիճակի, երբ հայ հասարակութիւնն աւելի զգայուն է դրսից հնչող յայտարարութիւնների, քան ներսում ներկայացւող վերլուծութիւնների նկատմամբ, որոնք տրամադրում են հանրութեանը տեղական փորձագիտական հանրութեան ներկայացուցիչները։

Մի շարք փորձագէտներ բազմիցս ասել են՝ ԵՄ-ն Հայաստանին էական ռազմական օգնութիւն տրամադրելու պլաններ չունի, որ ԵՄ ծրագրերը ներառում են միայն Ռուսաստանի Դաշնութեան վտարումը տարածաշրջանից, եւ ակնյայտ է, որ Եւրոմիութիւնը պատրաստ է վճարել «բարձր գին սրա» համար»։

Բանն այն է, որ եթէ տարածաշրջանից Ռուսաստանի Դաշնութեան դուրս գալու արդիւնքում Հայաստանը վերանայ, ապա Բրիւսէլը պատրաստ է «հաստատակամօրէն դիմանալ այս ողբերգութեանը»։ Հիմա մենք անցել ենք այն սահմանը, որից այն կողմ ԵՄ-ում չեն թաքցնում՝ մեզ համեմատում են Ուկրաինայի հետ, եւ, համապատասխանաբար, ՀՀ-ի համար նոյն ճակատագիրն են նախատեսում, ինչ Ուկրաինային։

Այսպէս, Alpha News-ի հետ զրոյցում Եւրոխորհրդարանի ֆրանսիացի պատգամաւոր, Եւրոխորհրդարանում քրդական բարեկամութեան համակարգող խմբի անդամ Ֆրանսուա Ալֆոնսին, պատասխանելով հարցին, թէ Ֆրանսիան իր զօրքերը կուղարկի՞ Հայաստանի պաշտպանութեան համար, ասել էր, որ ինչպէս Ուկրաինայի դէպքում, միակ բանակը, որը կուեւլու է, հայկականն է։ «Մեր մասնակցութիւնը դիմադրութեան միջոցների ապահովումն է»,- եզրափակել է նա։

Իրականում, պէտք է շնորհակալութիւն յայտնել Եւրոխորհրդարանի պատգամաւորին անկեղծութեան համար, քանի որ դա հէնց այն խօսակցութիւնն է, որն այսօր անհրաժեշտ է հայ հասարակութեանը։

Ընդհանուր առմամբ, Հայաստանի համար իրավիճակը շարունակում է մնալ շատ լարուած, քանի որ մի կողմից տեսնում ենք Ալֆոնսիի յայտարարութիւնների նման յայտարարութիւններ, տեսնում ենք, թէ ինչպէս է Եւրոխորհրդարանը որոշումներ, բանաձեւեր ընդունում Հայաստանի եւ Ադրբեջանի վերաբերեալ, որտեղ ամենակարեւորը վերաբերում է ոչ Ադրբեջանի դէմ պատժամիջոցների կիրառումը (որը կոչւում է «ծայրայեղ միջոց»), այլ եւրոպացի դիտորդների տեղակայումն արդէն Թուրքիայի հետ սահմանին։ Սա իր հերթին նշանակում է Հայաստանից ռուս սահմանապահներին դուրս մղելու քաղաքականութեան շարունակութիւն։

Եւ դա հէնց այն է, ինչը 100 տոկոսով համապատասխանում է Թուրքիայի եւ Ադրբեջանի շահերին, քանի որ ռուս սահմանապահների առկայութիւնը խանգարում է Բաքուին եւ Անկարային օկուպացնել Հայաստանի ողջ տարածքը։

Եւ այս ամենի ֆոնին ՀՀ Ազգային ժողովի նախագահ Ալէն Սիմոնեանն ասում է՝ չի բացառում, որ 2020 թւականի պատերազմը սկսւել է Ռուսաստանի եւ Ադրբեջանի համաձայնութեամբ, եւ նաեւ հետաքրքրւում է՝ Ռուսաստանն ինքը կը յարձակւի՞ Հայաստանի վրայ։

Աւելի վաղ արդէն ասել ենք, որ ՀՀ իշխանութիւններն իրենք են դրդում Մոսկւային հրապարակայնօրէն հրաժարւել Հայաստանի հանդէպ ստանձնած բոլոր պարտաւորութիւններից, ինչը կը բացի «դժոխքի դարպասները», այսինքն՝ հնարաւորութիւն կը բացի մեծ տարածաշրջանային պատերազմի, ինչն, ըստ իր շահառուների մտայղացման, պէտք է շեղի Ռուսաստանի Դաշնութիւնը ուկրաինական պատերազմից։

Մենք քայլում ենք «շատ բարակ սառոյցի վրայով», եւ հաշւի առնելով այն հանգամանքը, որ Փաշինեանը յայտարարեց «կարեւոր իրադարձութիւնների մասին այս տարւայ ապրիլին», շատ շուտով մեզ կարող են սպասել աղէտալի բնոյթի իրադարձութիւններ…

Մտածէ՛ք այդ մասին…»։

Բաքւի ԶԼՄ-ները շարունակում են Իրանի ղեկավարութեան նկատմամբ ատելութիւն տարածել

PUBLİKA.AZ

neçə belə parlament gördük. Yəni biz nisbətən fərqli insanları görürük, amma təsiredici güc yoxdur.

-Üçüncü növ seçkilər ciddi nəzarət vasitəsi kimidir. Bu vəziyyətdə seçkilər gedir, amma deyirlər

«ԱԼԻՔ» - Ադրբեջանի Հանրապետութիւնում յայտնի ասացւածք կայ. «Այնպէս եմ յիմար ձեւանալու, որ էութեանդ խորքից վառւես»։

Էհսան Մովահեդեանն իր սոցիալական ցանցերի միկրոբլոգներում գրառում հրապարակելով, յիշեցրել է այս ասացւածքի մասին եւ յաւելել է, որ Բաքւի լրատւամիջոցներից շատերը կա՛մ այս ասացւածքի վառ օրինակն են, կա՛մ իրենց էութեամբ մեղմ ասած՝ թիւրիմացութեան մարմնաւորումն են, չասելու համար յիմարութեան ժառանգութիւնն են։

Բանը նրանում է, որ նման թիւրիմացութիւնների աղբիւր հանդիսացող Telegraph-ի լրահոսում է յայտնւել մի չակերտեալ վերլուծութիւն Իրանում կայացած վերջին ընտրութիւնների մասին։ Կայքում տեղադրւած յօդւածը, որը պատկանում է Ադրբեջանի Հանրապետութեան աւագ գիտաշխատող Ջամալէդդին Դուլիեւի գրչին, ԻԻՀ-ի Բանիմացների խորհրդի եւ խորհրդարանական ընտրութիւնները որակել է քաղաքական լեգիտիմութիւնից զուրկ իրականութիւն։

Մովահեդեանը ընդգծած կարեւորել է Բաքւի թոյլ երակ հանդիսացող ինքնութեան խնդիրը, ինչը փորձ է արւում ջղաձիգ գոռումգոչումներով ներկայացնել որպէս խորք ունեցող իրականութիւն։ «Պարզ է, որ այս օրերին որոշիչ է նաեւ թուրքախօս ընտրողների քւէները։ Ընտրութիւններից առաջ այաթ. Խամենէին մեկնել էր Ատրպատականի նահանգներ։ Ուրմիայի գրախանութներից մէկում նա ազերի լեզւով զրուցել է գրավաճառներից մէկի հետ։ Առաջնորդը թերթելով գրքերն, գրավաճառին հարցրել է գրքի լեզուն ադրբեջաներէնի փոխարէն ինչու է Թուրքիայի թուրքերէնով գրւած։ Վաճառողը մի կերպ փորձել է մոլորեցնել, նշելով, թէ իբր գիրքը Բաքւի բարբառով է, ոչ թէ Թուրքիայի եւ այլն»։

Յօդւածագիրը շարունակութեան մէջ նշել է, որ այս խօսակցութիւնը նախապէս պայմանաւորւած ներկայացում է եղել, ինչը հասցրել են նկարահանել եւ լայնօրէն հեռարձակել է երկրի (Իրանի) լրատւամիջոցներով, միաժամանակ ներկայացնելով այաթ. Խամենէիի մտահոգութիւնը ադրբեջանական թուրքերէնի պահպանման նկատմամբ։ Յօդւածագիրը միանգամից խնդիրները կապ տալով իրար յաջորդ տողում նշել է, որ Թաւրիզում ունեցած իր ելոյթում, Գերագոյն առաջնորդը բոլորին հրաւիրել է մասնակցելու ընտրութիւններին։

Մովահեդեանը յիշեցնելով, որ նշւած դրւագը պատմում է Ուրմիայում վերջերս տեղի ունեցած գրքի ցուցահանդէսի ընթացքում Գերագոյն առաջնորդի շրջայցի մասին, անցել է նշւած յօդւածի տողատակերում եղած իրողութիւններին եւ արձանագրել, որ Ադրբեջանի Հանրապետութեան ստրկացած ժողովուրդը ստիպւած է նման անհեթեթութիւն կարդալ իր լրատւամիջոցներում, երբ ցանկանում է իմանալ Իրանի մասին։ «Աւելին, մի խումբ իրանցի փորձագէտներ, նոյնիսկ նման դէպքում, շարունակում են Բաքւի նման «յիմար ձեւացող» լրահոսերից ստանալ ուղղութիւն ու գիծ!!»,- յաւելել է Մովահեդեանը, յիշեցնելով, որ Telegraph-ը Լոնդոնի մամուլի մասնաճիւղն է Բաքւում, եւ հանդիսանում է Ալիեւների ընտանեկան իշխանութեան ոչ-պաշտօնական խօսնակը, յատկապէս, երբ վիճայարոյց յայտարարութիւններ թոյլ տալու պատասխանատւութիւնից խուսափելու կարիքն է ունենում։

Նա յաւելել է, որ պանթուրքիստական հակումներով գրականութիւն տարածող կրպակատէրերը, աչքերը նման վտանգաւոր փաստերի վրայ փակած որոշ պատասխանատուների ամենաթողութիւնից օգտւելով, պատմական ազերի լեզւի փոխարէն տարածում են Բաքւի ու Ստամբուլի թուրքերէնը, ինչը, սակայն, Գերագոյն առաջնորդի աչքից չի կարող վրիպել, ով ուղիղ աչքերին նայելով զգուշացնում է ճիշտ լեզւով թարգմանելու, եւ Թաւրիզի բարբառին հաւատարիմ մնալու կարեւորութեան մասին։

Օգտատէրերից մէկը մեկնաբանութիւնների բաժնում նշել է. «Այնուամենայնիւ, գրպանում «Գժի թուղթ» ունենալն՝ նախկին ԽՍՀՄ-ից ծնւած հանրապետութիւններում իշխանութիւն վարելու կարեւոր միջոցներից մէկն է կարծես։ Մնում էր հասարակութիւնը հաշտւի այդ իրականութեան հետ, ինչի հարցում ոչ Երեւանում, ոչ էլ Բաքւում կողմերի խնդիր չեն տեսնում միմեանց նման կերպ դիմելու հարցում»։ Առանց մեկնաբանութեան...

Լոյս է տեսել ՀՅԴ պաշտօնաթերթ «Դրօշակ»-ի 2024 թ. երկրորդ համարը

Փետրուարի 29-ից արդէն կարելի էր ընթերցել Դրօշակի 2024 թ. փետրուարի համարը: Փետրուար ամիսը, յիշարժան իրադարձութիւնների առումով, խորհրդանշական արժէք ունի հայութեան համար: Այդ իւրայատուկ շունչը ընթերցողը կը զգայ ծանօթանալով պաշտօնաթերթի ներկայ համարի հետ՝ շապիկի առաջին էջից մինչեւ վերջին էջը: Փետրուարեան սոյն համարի «Առաջնորդող»-ի վերնագիրն է «Ինչո՞ւ իշխանափոխութիւն տեղի չի ունենում»: Յօդուածում փորձ է արւում հիմնական մի քանի գործօնների ազդեցութեամբ բացատրել, թէ ինչու տեղի չի ունենում քաղաքական իշխանափոխութիւնը, երբ այն հասունացած պահանջ է Հայաստանի բնակչութեան մեծամասնութեան համար:

Երկրի ներքին մթնոլորտի ու գործընթացների պատճառները Մանուէլ Մկրտչեանը պարզաբանում է քննութեան նիւթ դարձնելով հասարակութեան մէջ իշխող մտայնութիւնները, ինչպէս եւ դրանց օրինաչափութիւնները:

Հրանտ Մելիք-Շահնազարեանը անդրադառնալով հայ-ադրբեջանական քաղաքական-դիւանագիտական գործընթացներին՝ ներկայացնում է դրանց վրայ արտաքին շահագրգիռ ուժերի ներգործութիւնը, որոնցով էլ պայմանաւորուած է տեւող գործընթացների առկայ վիճակը:

Հայութեան համար փետրուար ամսին տեղի ունեցած ամենանշանակալից եւ պատմական իրադարձութիւններից մէկն է 1921 թւականի Փետրուարեան ապստամբութիւնը: Խմբագրութիւնը այս առիթով վերահրատարակել է «Դրօշակ»-ի 1926 թւականի մարտի համարում ազգային-պետական նշանաւոր գործիչ Կարօ Սասունու յօդուածը: Լինելով Փետրուարեան իրադարձութիւնների ուղղակի եւ ակտիւ մասնակիցներից մէկը Սասունին իր յօդուածում ներկայացնում է ապստամբութեան բռնկման դրդապատճառները, ընթացքը, ինչպէս եւ ազգային վեհ ծառացման պատմական նշանակութիւնը:

Ուշագրաւ բազմաբնոյթ այլ յօդուածների շարքում, որոնք անպայման կը հետաքրքրեն ընթերցողներին, փետրուարի այս համարում տեղ է գտել նաեւ գրականագէտ Դաւիթ Գասպարեանի յօդուածը, որը վերնագրուած է. «Չարենցը քաղաքական մեղադրեալ՝ նացիոնալիստ, դաշնակցական ժողովրդի թշնամի»: Առաջին հայեացքից ներկայացւող նիւթը չի առնչւում 1920-ականների, 1980-ականների եւ մեր օրերի անցքերի հետ, սակայն ակընայայտ է բոլոր այս իրադարձութիւնների օրգանական ներքին կապը՝ բռնութեան երեւոյթը հայ ժողովրդի ազգային եւ մարդկային իրաւունքների, նրա արժէքների եւ ազատութիւնների դէմ: Անկախ նրանից, թէ ում դէմքով են հանդէս գալիս այդ իրաւունքը բռնաբարող, հայութեան զանգւածներին ու անհատ գործիչներին քաղաքական հալածանքների ենթարկող դահիճները:

«Դրօշակ»-ի 2024 թ. երկրորդ համարը համացանցում կարող էք գտնել droshak.am հասցէի ներքոյ:

«Դրօշակ» թիւ 2, 2024 թ.

Փառապանծ հայ ժողովրդի որդիներին ազգադաւ այս խունտայի հետ համեմատելը պարզապէս մեղսագործութիւն է

ԳԱՅԻԱՆԷ ՄԱՆՈՒԿԵԱՆ

Անընդունելի է զուգահեռներ անցկացնել 1918-1920 թւականների եւ 2018-2024-ականների աշխարհաքաղաքական փոթորիկների առջեւ հայկական իշխանութիւնների դրութեան եւ, որպէս հետեւանք, նրանց որդեգրած քաղաքականութեան միջեւ: Նման համադրութիւնը միայն անարգում է Հայոց պատմութեան փառապանծ էջերից մէկը, երբ Սարդարապատում յաղթական դրօշն է ծածանւել, եւ գաղափարական, ազգային ուժը վերականգնել է 600 տարւայ ընդմիջումից յետոյ ՀԱՅՈՑ ՊԵՏԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ, իսկ հետագայում նաեւ կազմակերպել է Սփիւռքն՝ իր ազգային ինստիտուտներով... Համեմատել այդ նւիրեալներին՝ Արամներին, Դրոներին, Ռուբէններին, Նիկոլ Դումաններին եւ հայ ժողովրդի այլ փառապանծ որդիներին ազգադաւ այս խունտայի հետ՝ պարզապէս մեղսագործութիւն է:

Նկատենք՝ մինչեւ 1920 թւականի գարուն փլուզւած Ռուսական կայսրութեան տարածքում՝ Ռուսաստանում, ընթանում էր թէժ քաղաքացիական պատերազմ, եւ ամենեւին յստակ չէր, թէ որ կողմն էր լինելու յաղթող, ուստի ՀՀ իշխանութիւնների համար կողմերից ոչ մէկը չէր կարող դիտարկւել՝ որպէս Ռուսաստանի կենտրոնական իշխանութիւն:

1818-ից մինչեւ 1920-ի սկիզբը Ռուսաստանի հարաւային շրջանները վերահսկւում էին սպիտակգւարդիականների կողմից, եւ այդ տարածքով էր տեղի ունենում ամերիկեան հացահատիկի մատակարարումը հարիւր-հազարաւոր սովալլուկ գաղթականներով Հայաստան:

Բոլշեւիկներն իրենք իշխանութեան են եկել Արեւմուտքի հետ իրենց սերտ գործակալական կապերի շնորհիւ: Բաւական է նշել, որ նախայեղափոխական ժամանակահատւածում լենինեան կուսակցութիւնն իր համագումարները գումարում էր Լոնդոնում, իսկ բոլշեւիկեան կառավարութեան թիւ երկրորդ պարագլուխը՝ Տրոցկին, ԱՄՆ քաղաքացի էր: Հետեւաբար՝ այն ժամանակւայ բոլշեւիկները իւրաքանչիւր հայ ազգային գործիչի համար չէին կարող ասացացւել ռուս ազգային եւ հայրենասէր իշխանութեան հետ:

Բոլշեւիկներն ի սկզբանէ թըշնամական դիրքորոշում որդեգրեցին ազգային աւանդական արժէքների եւ ինստիտուտների նկատմամբ, ինչպիսիք էին հայութեան պարագայում եկեղեցին-քրիստոնէութիւնը, հայ բուրժուազիան եւ վաճառականութիւնը, հողատէր գիւղացիութիւնը եւ սկզբնական շրջանում՝ նոյնիսկ ընտանիքը:

1918-ին նորաթուխ հայ պետական գործիչները չունէին ամբարւած պետական փորձ, որը յաջորդ 100 տարւայ ընթացքում ժառանգեցին յաջորդող քաղաքական սերունդները, եւ աշխարհն այդ ժամանակահատւածում այդպիսի ցնցումային իրադարձութիւններ թերեւս Հռոմէական կայսրութեան փլուզման ժամանակ էր ապրել, հետեւաբար՝ պատմական զուգահեռներ անցկացնելու փորձառութիւն էր բացակայում:

Նման համեմատութիւնը միայն անարգում է Հայոց պատմութեան փառապանծ էջը: Դա հաւասարազօր է ազգային արժէքների պղծմանը... եւ որդեգրւած ազգադաւ քաղաքական ընթացքի եւ տրամաբանութեան շրջագծում է:

Յ. Գ. - Եւ ամենակարեւոր տարբերութեան մասին՝ բարոյականութեան... 1918-20 թթ., երբ ստիպւած ձախողւած պայմանագիր էին ստորագրում, իշխանութիւնը չէր հաշտւում, պայքարում էր... պայքարում էր իր սահմանների համար, անգամ խաղաղ թւացող Լոռիում... ոչ թէ իր պարտութիւններից ու իր ձախողումներից բոլորովին էլ վատ չզգալով՝ նոյնիսկ հպարտանում է սեփական պարտութեամբ: Այդ է տարբերութիւնը:

Այն ժամանակ չէին հաշտւում եւ ձգտում էին յաղթահարել անյաջողութիւնները:

Իսկ այս խունտան հպարտանում է եւ կոչ է անում հաշտւել պարտութեան ու ձախողման հետ:

168.am

Սեւակ Յակոբեան.

«Մարտի 1-ը իշխանութեան է բերել՝ յիշում են, Սումգայիթը կարող է զրկել՝ չեն յիշում»

Մարտի 1-ը իշխանութեան է բերել՝ յիշում են, Սումգայիթը կարող է զրկել՝ չեն յիշում: Այս մասին Facebook-ի իր էջում գրել է Yerevan.today»-ի խմբագիր Սեւակ Յակոբեանը:

Նա, մասնաւորապէս, նշել է. «Մարտի 1-ն է: Գարնան առաջին օրը: Իշխանաւորների համար իբր տխուր օր է. 10 զոհեր, հայի արիւն, կեանքեր եւ այլն:

2 օր առաջ Սումգայիթեան ջարդերի տարելիցն էր, երբ ադրբեջանական իշխանութիւնների կողմից պետական մակարդակով կազմակերպւած քաղաքի հայ ազգաբնակչութեան սպանութիւններ տեղի ունեցան եւ զանգւածային տեղահանութիւն: Դա եղել է 1988 թ. փետրուարի 27-ից 29-ը ընկած ժամանակահատւածում: Հայ ազգաբնակչութեան դէմ իրականացրած այս պետական յանցագործութեան նպատակն էր կանխել Արցախեան շարժումը, կանխել Արցախեան ազատագրական պայքարի տարածումը:

Ոճրագործութիւնը ծրագրաւորւած էր, մարդասպանների մօտ հայերի բնակարանների ցուցակներն էին, սցենարը նախապէս մշակւած էր, դերերը բաժանւած՝ սպանութիւն եւ ջարդեր իրականացնողներ, թալանողներ, ունեցւածք ոչնչացնողներ, յանցագործութեան հետքերը վերացնողներ, ոճիրն իրականացնելու համար արտադրամասերում մետաղաձողերի եւ այլ գործիքների պատրաստումը, թմրանիւթերի եւ ոգելից խմիչքի բաժանում, այդ ամէնը բացայայտել ու դատապարտել է միշտ: Անգամ ԽՍՀՄ պաշտօնական տեւալներով, մի քանի տասնեակ, իսկ ոչ պաշտօնական՝ 1000-ից աւելի սպանւածներ, որոնց մեծ մասը խոշտանգումներից ու կտտանքներից յետոյ ողջակիզւած, հազարաւոր վիրաւորներ, հարիւրաւոր բռնաբարւածներ, այդ թւում՝ մեծ թւով անչափահասներ, 18.000 փախստականներ: Մինչ այսօր, Սումգայիթի Հայոց Յեղասպանութեան զոհերի ճշգրիտ թիւը պարզւած չէ, ցեղասպանութեան ենթարկւածների թիւը հասնում է հազարի, որոնց աճիւնները մինչեւ օրս էլ յայտնաբերւում են Սումգայիթի արւարձաններում նոր շինարարութիւն կատարելիս:

Հիմա էսօրւայ իշխանութիւնը, որ առաւօտ բարլուսով, շնչակտուր ընկնում է ու մարտի 1-ի՝ իրենց կազմակերպած խուլիգանութեան արդիւնքում զոհերի է յիշում, էդ 2 օր առաջ հայ ազգի դէմ հերթական ցեղասպանութեան տարելիցը ինչի՞ չի յիշում:

Ասեմ՝ ինչու չի յիշում: Որովհետեւ Սումգայիթ յիշել, սգալ ու դատապարտելը ունի հասցէատէր՝ Իլհամ Ալիեւն է, որից վախենում են, նրան բան չեն ասում, որովհետեւ կը զրկւեն իշխանութիւնից:

Իսկ մարտի 1-ը՝ հակառակը, այդ օրը շահարկելով ու մարդկանց յոյզերի վրայ խաղալով եկել են իշխանութեան: Իրենք շնորհակալ են մարտի 1-ի զոհերից, դրա համար էլ առաւօտ բարլուսով գնում-կանգնում, ճառեր են ասում, խաչակնքւում, խոնարհւում, մտքերում ասում, որ երախտապարտ են: Իսկ Սումգայիթեան տարելիցին, ամէն ինչից կը խօսեն, հաթաթաներ կը տան բոլորին, բացի ադրբեջանցի մարդասպաններից ու նրանց ղեկավարներից:

Վերջին տարիներին մեր գլխին եկածը բացայայտելուց յետոյ կարող է, արդէն, մարտի 1-ը ոչ թէ ոճրագործութեան օր յիշւել հայոց պատմութեան մէջ, ոչ թէ իրենց հռչակած կորսւած գարնան առաջին օր, այլ կը յիշւի որպէս հայրենիքի պաշտպանութեան օր, ազգային պաշտպանութեան օր, 2020-ից ի վեր մեր ապրած աղէտը 10 տարով յետաձգելու օր: Կարող է բացայայտւել, որ այդ զոհերը խուլիգանութեան կազմակերպիչները տւեցին իրենց նպատակին հասնելու համար, բայց օրւայ իշխանութիւնը կարողացաւ կանխել այն, ինչը չկարողացաւ կանխել 2018-ին:

Հ.Մ.Ա.Կ.-ի Արուեստից միութեան նախաձեռնութեամբ կայացաւ «Արարատ» պարախմբի տարեկան ելոյթը

80 տարիներ առաջ համայնքում իր աշխատանքը սկսեց Հ. Մ. «Արարատ» կազմակերպութիւնը, որը տարիների ընթացքում համալրուել է բազմաթիւ միութիւններով, կրթելով ու դաստիարակելով մեր նոր սերնդի սաներին:

Կազմակերպութեան միութիւններից է Արուեստից միութիւնը, որի նախաձեռնութեամբ ուրբաթ, փետրուարի 23-ին Հ. Մ. «Արարատ» կազմակերպութեան «Կոմիտաս» սրահում տարեկան ելոյթով հանդէս եկաւ «Արարատ» պարախումբը հանդիսատեսին ներկայացնելով հայկական, ու միջազգային պարային կատարումներ:

Ելոյթի սկզբում օրհնեալ բացման խօսքով հանդէս եկաւ Մեղրի Սարխոշեանը: Իր խօսքի ընթացքում նա նշեց. «Հ. Մ. «Արարատ» կազմակերպութիւնը իր 80-ամեայ փառաւոր պատմութեան ընթացքում, ունեցել է բազմիցս սիրողական եւ մասնագիտական պարախմբեր, սակայն 28 տարիներ առաջ հիմքը դրուեց «Արարատ պարի դպրոց»-ի, որը թերթել է պատմական արժէքաւոր էջեր, տարիների հետեւողական եւ տքնաջան աշխատանքի արդիւնքում»: Նա նշեց, որ «Արարատ» պարախումբը նախկին տարիներին հիւրախաղերով հանդէս է եկել Հայաստանում, Լիբանանում, մասնակցել է Վրաստանում կազմակերպուած պարի մրցոյթին, շահելով «Գրանդ պրի» մրցանակը եւ վերջերս 2023 թւականի օգոստոսի 5-ին Գիւմրիում հանդէս է եկել Հայաստանի 8-րդ Համահայկական խաղերի բացման հանդիսութեանը»: Նա ընդգծեց, որ «28-ամեայ պարախումբը, իր առաջին քայլերը սկսեց ՀՀ պարի պետական անսաբլի մենակատար՝ Ժոռա Դիլանեանի ղեկավարութեամբ, իսկ քանի տարիներ անց պարի դպրոցը պատիւն ունեցաւ վայելելու եւ մասնագիտանալու ՀՀ պարի պետական անսամբլի նախկին մենապարուհի, «Բարեկամութիւն» համոյթի տարիների փորձաւար եւ ՀՀ վաստակաւոր արտիստ՝ Կարինէ Ղազարեանին, որպէս գեղարուեստական ղեկավար, իսկ յաջորդ տարիներում պարի դպրոցը իր մօտ հիւրընկալել է հայրենիքի պարարուեստի վաստակաւոր արտիստների եւ արուեստի անուանի գործիչների ներկայութիւնը, ինչպէս օրինակ՝ Գագիկ Կարապետեանի, Քրիստինէ Յովահիկիմեանի, Ռուդոլֆ Խառաթեանի, Սրբուհի Բաբայեանի, Յակոբ Մարգարեանի եւ Զոհրաբ Բակալեանի, որոնց կատարած բեմադրութիւնները աւելի գունեղ են դարձրել «Արարատ» պարախմբի պարերի ցանկը:

Պարախումբը նաեւ ներկայացրել եւ վայելել է իրանահայ անուանի արուեստագէտ Աւագ Աբրահամեանի բեմադրութիւնները, որը բացի բեմադրութիւններ, միշտ ոգի եւ շունչ է տուել մեր պարուհիներին ելոյթների սեմին:

Հարկ է գնահատել նաեւ խմբիս սիրելի Անահիտ Աւետեանի աւելի քան 20 տարիների սիրայօժար գործունէութիւնը, թէ՛ որպէս բեմադրիչ, եւ թէ՛ որպէս աւագ ուսուցիչ»:

Նա այսպէս շարունակեց. «Այսօր երախտապարտ ենք մեր սիրելի ուսուցչական կազմին, Լինետ Սարգսեանին, Ալմարա Շահմիրեանին եւ օգնականներ՝ Էլին Դանիէլեանին, Նարէ Մնացականեանին եւ Նարէ Տէր-Մկրտչեանին իրենց կատարած աշխատանքի ու ներդրման համար»:

Միջոցառմանը տեսաֆիլմեր ցուցադրուեց «Արարատ» պարախմբի Հայաստանում ունեցած ելոյթների մասին: Կատարումները իրականանում էին շատ արագ տեմպով եւ մէկը միւսին յաջորդում էին տարիքային տարբեր խմբերը:

Յատկանշական է, որ միջոցառման աւարտին բեմ հրաւիրուեց Իրանի Իսլամական խորհրդարանում Թեհրանի եւ հիւսիսային իրանահայութեան պատգամաւոր Արա Շահվերդեանը: Իր ելոյթի ընթացքում պատգամաւորը բարձր գնահատեց մարզամշակութային միութիւնների անխոնջ աշխատանքը, հայ նոր սերնդի դաստիարակման գործում եւ գնահատեց Հ. Մ. «Արարատ» կազմակերպութեան 80-ամեակին նուիրած «Արարատ» պարախմբի ելոյթը: Պատգամաւորը համապարփակ գծերով անդրադարձաւ այն աշխատանքների մասին, որոնք իրականացել են մարզամշակութային միութիւնների ազգանուէր միութենականները աշխատանքները աւելի սահուն դարձնելու համար:

Հանդիսութեանը ներկայ էին Թ. Հ. Թ. Պատգամաւորական ժողովի ատենապետ Սուրիկ Աբնուսեանը, Թ. Հ. Թ. Թեմական խորհրդի ատենապետ ճրտպ. Նորայր Արամեանը, արուեստագէտներ, միութիւնների եւ միութիւնների յարկերի տակ աշխատող տարբեր պարախմբերի ու պարային համոյթների պարուսոյցներ ու ղեկավարներ եւ մեծ թիւով հանդիսատես:

Վերջում պարախմբի տարբեր տարիքային սահմաններում բոլոր սաները միասնաբար բեմ բարձրանալով գնահատեցին:

Թղթակից
ԿԱՐԻՆԷ ԴԱՒԹԵԱՆ

Ինչո՞ւ է Արեւմուտքն ատամներով պաշտպանում Ստալինեան սահմանները



Խորը մտորելու տեղիք տուող հարցերի շարան...

Փետրուարի 17-ին ԱՄՆ-ի ու Մեծ Բրիտանիայի դեսպանները ծաղիկներ են խոնարհել Եղիշէ Չարենցի յուշարձանին՝ ի յիշատակ Ալեքսէյ Նաւալնիի: Պարզ է՝ Չարենցին այցելելով՝ նրանք դատապարտել են Ստալինեան բռնապետութիւնը՝ Պուտինին եւս համարելով այդ ընթացքի շարունակող:

Հետաքրքիր է՝ եթէ Արմուտքն էդքան նեղուած է ստալինեան բռնապետութիւնից, Ստալինից ու ԽՍՀՄ-ից, ապա որեւէ մէկի մօտ հարց չի՞ առաջանում՝ էդ Արեւմտեան երկրներն ինչո՞ւ են ատամներով պաշտպանում ՀՀ-ի այն սահմանները, որոնք գծել է այդ նոյն բռնապետ Ստալինը:

ԽՍՀՄ այն սահմանները, որի պատճառով Լեռնային Ղարաբաղը յայտնուել է Ադրբեջանի կազմում, Նախիջեւանը յանձնուել է Ադրբեջանի խնամակալութեանը, դա սովետի, բոլշեւիզմի, Լենինի ու Ստալինի արածն է: Եթէ Լենինն ու Ստալինը էդքան վատն են, բռնապետ են, էդքան մարդկանց են կոտորել, ապա ինչո՞ւ են Արեւմուտքի սոյնն պարոնները կուրծք ծեծում, որ յանկարծ Ղարաբաղը Ադրբեջանից չգայ եւ միանայ Հայաստանին:

Ինչո՞ւ «ատելով» ու «չընդունելով» Լենին-Ստալինին, Արեւմուտքի նշեալ պարոնները չեն պաշտպանում ԼՂՀ-Շահումեանի միաւորմամբ միանգամայն նոր սահմաններով, արդար սահմաններով, Լենին-Ստալինին մերժող սահմաններով Հայաստանին ու յանուն սեփական ազատութեան, արդարութեան վերականգնման պայքար մղած հայ ժողովրդին:

Զարմանալի չէ՞, որ Արեւմուտքը մոլեգին ձեւով պաշտպանում է էդ նոյն զոյգի գծած եւ խորհրդային շրջանում երբեւէ չճանաչուած «սահմանները», որոնք իրականում եղել են խորհրդային կոլխոզ-սովխոզներն իրարից բաժանող սահմաններ:

Էստեղ կասէք՝ իրենք պաշտպանում են այն, ինչ ներկայումս ընդունում է ՀՀ իշխանութիւնը: Լո՛ւրջ: Իսկ քանի՞ դէպք ասեմ, որ իրենք ոչ թէ պաշտպանել, այլ, հակառակը, դաժան կերպով պատժել են այն իշխանութիւններին, որոնց ուղին ու քաղաքական դաւանանքը չեն ընդունել:

Ինչո՞ւ Նիկոլ Փաշինեանի նէոբոլշեւիկեան խունտան չի պատժւում Արեւմուտքի կողմից: Ինչո՞ւ են էդ մարդիկ էդքան ոգեւորուած Ստալինով, Լենինով, որ վերջիններիս ժառանգութիւն-սահմանները պաշտպանում են այնպէս, որ անգամ Պուտինը կը նախանձէր:

Ինչո՞ւ մինչեւ հիմա մեր հասարակութեան, քաղաքական իսթեբլիշմենտի, էլիտայի մօտ չի կարծրացել այն գաղափարը, որ ով պաշտպանի խորհրդային «սահմաններն» ու վարչատարածքային բաժանումը, ով յայտարարի՝ Ղարաբաղը Ադրբեջանինն է (քանի որ սովետի ժամանակ իրենցը՝ է եղել), ապա էդ ասողին խայտառակէին, ասէին՝ սա ստալինիստ է, սա բոլշեւիկ է, սա Աթարբեկով ու Աւիս Նուրիջանեան է...

Ինչո՞ւ այդ հողի վրայ մնացինք այն նոյն սովետական-ծայրագաւառական խեղճութեան մէջ, եւ արդիւնքում՝ մի իջեւանցի Գաւառական ճարպիկ-դաւաճան-նէոբոլշեւիկ վերականգնեց այն բոլոր խայտառակութիւնները, որոնք մեր գլխին արել էին Լենին-Ստալինն ու նրանց հայ դրածոները:

Ինչո՞ւ այնպիսի մթնոլորտ չստեղծեցինք, որ հէնց Ալիեւը կամ Փաշինեանը մի տեղ Եւրոպայում կամ այլուր խօսէին, մարդիկ յարձակուէին ու ասէին՝ սա ստալինիստ է, սա բոլշեւիկ է, սա Լենինի ժառանգորդն է, սրանց ո՞ւր էք բերել առաջին պլան:

Ալիեւը ո՞նց ստեղծեց այն մթնոլորտը, որ Ղարաբաղը պէտք է վերցնեմ, քանի որ դա սովետի ժամանակ իմն է եղել: Ո՞նց ընդունեց ու կուտը կերաւ Արեւմուտքը: Հարցեր են, չէ՞:

Ինչո՞ւ չշահարկեցինք, չօգտագործեցինք այն պահը, երբ

- 2014-ին Պուտինը մտաւ Ղրիմ եւ ուղղակի-անուղղակի ասաց՝ Խրուշչովն է տուել, մեր տարածքն է եղել, եւ ինչո՞ւ պէտք է սովետի ժամանակ փոխանցուած տարածքը չվերադառնայ իր օրինական տիրոջը,

- 2022-ին Պուտինը մտաւ Ուկրաինա՝ անուղղակի- ուղղակի յայտարարեց նոյնը. Ուկրաինան սովետական կազմաւորում-ժառանգութիւն է, եւ պէտք է վերագծել լենինեան սահմանները:

Հետաքրքիր է՝ Ղարաբաղն Ադրբեջանի կազմում կամ, Ադրբեջան արհեստածին հասկացութիւնն ընդհանրապէս ո՞ւմ նախագիծ-ժառանգութիւնն էր, հետաքրքիր է....

ՎԱՀԷ ՍԱՐԳՍԵԱՆ
Yerkir.am կայքի խմբագիր

Հրանտ Մելիք-Շահնազարեան.

«Փաշինեանն ասում է, որ Ուկրաինայի հարցում ՌԴ դաշնակիցը չէ, Մոսկւան էլ կասի ՀՀ դաշնակիցը չէ Ադրբեջանի դէմ պատերազմում»

Փաշինեանն ասում է, որ Ուկրաինայի հարցում ՌԴ դաշնակիցը չէ, Մոսկւան էլ կասի ՀՀ դաշնակիցը չէ Ադրբեջանի դէմ պատերազմում:

«Կիզակէտում Արկադի Գրիգորեանի հետ» հաղորդման ժամանակ ասել է քաղաքագէտ Հրանտ Մելիք-Շահնազարեանը.

«Մտավախութիւն ունեմ, որ ռուսական կողմը կը դրդի Բաքուին տարածաշրջանում հարցերը լուծել ինչպէս ՌԴ-ին է ձեռնտու: Խօսքը միջանցքի ու դրա ռուսական վերահսկողութեան մասին է: Ալիեւը վերջին ամիսներին այս հարցում խօսում է Ռուսաստանի շահերից:

Հայաստանին ուշքի բերելու՝ ՌԴ եւ Իրանի գործիքները ցաւոտ են լինելու, ընդհուպ Բաքի յարձակում: Փաշինեանն, իր հերթին, լեգիտիմ իրաւունք է տալիս ՌԴ-ին չմիջամըտել Հայաստանի դէմ հնարաւոր պատերազմին: Ռուսներն իրենց անգործութիւնը հիմնաւորում են Փաշինեանի վարքագծով: Ասելով գուբեռնիա չենք, իշխանութիւնները Հայաստանը տանում են ուղիղ գուբեռնիա դառնալու ուղղութեամբ»,- նշել է քաղաքագէտը:

Արմէն Աշոտեան.

«Գէոպոլիտիկ պայքարում ԵՄ-ի նպատակը յաղթելն է, իսկ մերը՝ ընդամէնը ֆիզիկապէս վերապրելը»

Ծաւալուած գէոպոլիտիկ պայքարում ԵՄ-ի նպատակը յաղթելն է, իսկ մերը՝ ընդամէնը ֆիզիկապէս վերապրելը: Այս մասին «Նուբարաշէն» ՔԿՀ-ից գրել է ՀՀԿ փոխնախագահ Արմէն Աշոտեանը:

«Հայաստան-ԵՄ. գէոպոլիտիկ բումից եւ իմիտացիոն ֆասադից այն կողմ.

Հայաստան-ԵՄ յարաբերութիւններն իրենց տեսանելի հատուածում բում են ապրում, սակայն սուր աչքն այդ վառվռուն ֆասադի յետեւում չի կարող չնկատել համակարգային, կոնցեպտուալ խնդիրներ, որոնք հարցականի տակ են դնում նման ճարտարապետութեամբ կառուցած կոնստրուկցիայի դիմացկունութիւնը:

Նման գէոպոլիտիկ տենդի պատճառները շատ պարզ են. Հայաստանի գործող վարչակազմի եւ ԵՄ ընթացիկ աշխարհաքաղաքական շահերը համընկնում են: Ռուսաստանի դէմ պայքարում ԵՄ-ին անհրաժեշտ են նոր միաւորներ, իսկ մեր երկրի ներկայիս ադմինիստրացիան պատրաստ է մոբիլիզացուել հակառուսական գէոպոլիտիկ բանակ:

Այս դոմինանտի գերակայութիւնը բերում է մի իրավիճակի, երբ եւրոպական քաղաքական ինստիտուտները պատրաստ են աչք փակել Հայաստանի ներսում Փաշինեանի աւտորիտար կառավարման բացում եւ ցայտուն դրսեւորումների, կոռուպցիայի աննախադէպ աճի, ժողովրդավարական յետընթացի վրայ: Հերթով հնչում են գնահատականներ, որոնք բացարձակ կապ չունեն հայաստանեան իրականութեան հետ, աւելին, վկայում են այն մասին, որ ԵՄ-ն հեշտութեամբ պատրաստ է զոհաբերել սեփական արժէքները յանուն այս պահին իրենց շահերին համահունչ գործող Փաշինեանի իշխանութեան ամրապնդման:

«Խաբի՛ր ինձ» սկզբունքի կիրառումը վերջերս դասական կերպով դրսեւորուեց Հայաստան-ԵՄ շրջանակային համաձայնագրի իմպլեմենտացիային նուիրուած հերթական զեկոյցում, որում տեղ գտած գնահատականները Հայաստանում փոփոխութիւնների մասին որեւէ աղերս չունեն ոչ միայն Հայաստան-ԵՄ շրջանակային համաձայնագրի կատարման հետ, այլեւ հայկական իրականութեան հետ խորը դիսոնանսի մէջ են:

Այդ զեկոյցում ծածկադմփոց է արուած, օրինակ, դատական իշխանութեան բարեփոխումների ձախողումը, որի կոռումպացուածութեան եւ քաղաքականացուածութեան մասին գնահատականներ էին հնչել անգամ ԵԽԽՎ Հայաստանի հարցով համազեկուցողների կողմից: Շրջանցուած էր կոռուպցիայի դէմ պայքարի տապալման թեման, ինչն արձանագրուած է նոյն Transparency International-ի զեկոյցում: Որեւէ անդրադարձ չկայ երկրում քաղաքական իրաւունքների ոտնահարումների վերաբերեալ եւ այլն:

Այս այլընտրանքային իրականութեան կերտմանը զուգընթաց՝ նոյն եւրոպացիք շատ ազնիւ գրել էին, որ վիզաների ազատականացման երկխօսութեան մեկնարկը պահանջում է քաղաքական որոշում, եւ այստեղ հարց է առաջանում. եթէ Հայաստանը իրօք այդպիսի լաւ բարեփոխումներ է անում եւ այդքան

(Շար. 6-րդ էջում)

Ադրբեջանցի վանդալները Ստեփանակերտում ապամոնտաժել են Շառլ Ազնաւուրի յուշարձանը

Ադրբեջանի վարչախումբն ապամոնտաժել է Ստեփանակերտի Պոլ Էլիւար Ֆրանկոֆոնիայի Կենտրոնի հարեւանութեամբ գտնուող Շառլ Ազնաւուրի յուշարձանը, որը կանգնեցուել է անւանի երգչի 100-ամեակի կապակցութեամբ 2022 թւականին: Այս մասին յայտնում է Արցախի մշակութային ժառանգութեան պաշտպանութեան պետական խորհուրդը:

«Ստորեւ լուսանկարներում՝ Շառլ Ազնաւուրի յուշարձանը եւ այդ նոյն վայրը այս տարուայ յունուար ամսին: Աւելի վաղ ապամոնտաժել են գրող Յակոբ Յակոբեանի, ազգային բարերար Ալէք Մանուկեանի, ռուսական համայնավար առաջնորդ Ալեքսանդր Միասնիկեանի, սովետական զինուորականներ Ադմիրալ Իսակովի, Անատոլի Զինեւիչի, Քրիստաֆոր Իւանեանի եւ այլոց յուշարձանները: Ապամոնտաժել է նաեւ Արցախի հերոս Աշոտ Ղուլեանի յուշարձանը՝ Ստեփանակերտի նոյնանուն պուրակում: Համացանցում հրապարակուող նիւթերից տեղեկանում ենք նաեւ, որ վանդալիզմի են ենթարկւում արցախեան ազատամարտում զոհուածների գերեզմանները»,- նշուած է խորհրդի տարածած յայտարարութիւնում:

News.am

Չափել ճնշումը օրը 2 անգամ. սրտաբանի խորհուրդները եղանակի տատանումների հետ կապված

Եղանակային արտայայտուած տատանումներով պայմանաւորուած աւելացել է զարկերակային բարձր ճնշումով եւ սրտային այլ հիւանդութիւնների սրմամբ հիւանդանոցներ դիմողների թիւը: Այս մասին յայտնել է բժիշկ-սրտաբան Տիգրան Խաչատրեանը:

«Սրտային խնդիրները, սովորաբար, գարնանն ու աշնանն են սրւում, սակայն վերջին տարիներին ու յատկապէս, այս տարի, սրտային խնդիրներով դիմողների աճ նկատւել է ձմռան ամիսներին»,- ասաց բժիշկը:

Սրտաբանի խօսքով, եթէ անցեալ տարի շողացող առիթմիայով եւ սրտանօթային այլ խնդիրներով հոսպիտալացման դէպքերն էին շատ, ապա այս տարի գերակշռում են զարկերակային բարձր ճնշմամբ եւ սուր ինֆարկտներով դէպքերը:

Ինչ անել

Բարձր ճնշում ունեցողներին խորհուրդ է տալիս.

• սահմանափակել աղի օգտագործումը

• ամէն օր 2 անգամ չափել զարկերակային ճնշումը

• Անհրաժեշտութեան դէպքում, եւ միայն բժշկի ցուցումով, փոխել դեղաչափը

Ըստ մասնագէտի, ճնշումը պէտք է պարբերաբար չափել, քանի որ երբեմն բարձր ճնշման դէպքում բուժառուն իրեն լաւ է զգում, եւ չի հասկանում, որ բարձրացել է ճնշումը:

Տիգրան Խաչատրեանի խօսքով, յաճախ ձմռան ամիսներին դեղաչափի փոփոխութեան կարիք է լինում, սակայն դա միայն բժշկի հետ խորհրդակցութեան արդիւնքում կարող է որոշուել, բուժառուները չպէտք է ինքնաբուժութեամբ զբաղուեն:

Տօնական սիրտ

Ձմռանը սրւող տարածուած հիւանդութիւններից մէկը շողացող առիթմիան է: Բժշկի խօսքով հիւանդութեան սրման գլխաւոր պատճառներից մէկը ոգելիցի չարաշահումն է: Ամանորեայ տօներին բուժառուները սովորաբար չարաշահում են ալկոհոլն ու վնասակար սնունդը, մոռանում դեղահաբերի ընդունման մասին, ինչի պատճառով էլ յունւար ամսին աւելանում են հիւանդութեան սրմամբ պայմանաւորուած հոսպիտալացման դէպքերը: Բժիշկների շրջանում այս երեւոյթը որպէս «տօնական սիրտ» է յայտնի:

Հիպերտոնիան երիտասարդանում է

Ինչպէս ամբողջ աշխարհում, այնպէս էլ Հայաստանում, հիւանդութիւնների երիտասարդացման միտում կայ: Երիտասարդների շրջանում աւելի յաճախ է զարկերակային ճնշման բարձրացում նկատւում, ինչը, ամենայն հաւանականութեամբ, վնասակար սովորութիւններով է պայմանաւորուած:

Բժիշկը չի բացառում նաեւ, որ դիմողների թի աճը հասարակութեան գիտակցութեան բարձրացմամբ է պայմանաւորուած: «Գովելի է, որ արդէն առաջին նախանշանների դէպքում դիմում են, ինչը հնարաւորութիւն է տալիս կանխարգելել հիւանդութեան հնարաւոր բարդացումները»,- ասաց նա:

Գիտնականները դեպրեսիայի բուժման անսպասելի մեթոդ են բացայայտել

Գիտնականների գնահատմամբ՝ երկրագնդի չափահաս բնակչութեան 5 տոկոսը տառապում է դեպրեսիայից, հոգեկան խանգարում, որը բացասաբար է ազդում մարդու տրամադրութեան վրայ:

Դեպրեսիայի մակարդակն աւելացել է COVID-19-ի համավարակի ժամանակ եւ դրանից յետոյ եւ շարունակում է աւելանալ այնպիսի խնդիրների պատճառով, ինչպիսին են անհաւասարութիւնը, աշխատանք կորցնելը եւ անարդիւնաւէտ սոցիալական աջակցութիւնը:

Չնայած հակադեպրեսանտներն ընդհանուր առմամբ անվրտանգ են առողջութեան համար, դրանք կարող են կողմնակի ազդեցութիւններ ունենալ, ինչպիսին են ստամոքսի հետ կապուած խնդիրները, գլխացաւը, քնի հետ կապուած խնդիրները, քաշի աւելացումը եւ տագնապի զգացումը, ինչը երբեմն կարող է վատացնել մարդու կեանքի որակը:

Այժմ Սան Ֆրանցիսկոյի կալիֆորնիական համալսարանի հետազօտողները յայտնաբերել են, որ դեպրեսիա ունեցող մարդկանց մարմնի ջերմաստիճանն աւելի բարձր է, քան նրանցը, ովքեր չեն տառապում դեպրեսիայից, ինչը թոյլ է տալիս ենթադրել, որ բուժման նոր մեթոդները՝ ուղղուած մարմնի ջերմաստիճանի իջեցմանը, օրինակ՝ ջերմային թերապիան տաք վաննայում կամ սաունայում, կարող են օգտակար լինել հոգեկան առողջութեան համար:

Հետազօտութիւնը հրապարակւել է Scientific Reports ամսագրում:

Վայլի անւան նէյրոգիտութիւնների ինստիտուտի եւ Օշերի անւան ինտեգրատիւ առողջութեան կենտրոնի (Սան Ֆրանցիսկոյի կալիֆորնիական համալսարան) հոգեբուժութեան դոցենտ, հետազօտութեան առաջատար հեղինակ, դոկտոր Էշլի Մէյսոնի խօսքով՝ դեպրեսիան խիստ իջեցնում է կեանքի որակը, իսկ բուժման առկայ մեթոդները չեն բաւարարում բնակչութեան կլինիկական պահանջմունքները:

Դա յանգեցրել է այն բանին, որ դոկտոր Մէյսոնը եւ նրա թիմը ուսումնասիրել են պոտենցիալ կապը դեպրեսիայի եւ մարմնի բարձր ջերմաստիճանի միջեւ:

«Այդ կապը յատկապէս հետաքրքիր է, որովհետեւ կան տեւալներ, որոնք ցոյց են տալիս, որ երբ մարդիկ դեպրեսիայի մէջ են գտնւում, անկախ այն բանից, թէ ինչպէս է նրանց համար աւելի լաւ լինում, նրանց ջերմաստիճանն ունենում է կարգաւորման միտում: Բացի այդ, ի յայտ են եկել նոր տեւալներ, որոնք վկայում են, որ ջերմաստիճանային միջամտութիւնները կարող են նւազեցնել դեպրեսիայի ախտանշանները: Օրինակ, կան տեւալներ այն մասին, որ ջերմային միջոցների, մասնաւորապէս՝ ինֆրակարմիր շոգեբաղնիքի օգտագործումը, առաջ է բերում մարմնի ջերմաստիճանի կտրուկ բարձրացում»,- եզրակացրել են գիտնականները:

Դոկտոր Մէյսոնը նշել է, որ մարմնի ջերմաստիճանի այդ բարձրացումը գործի կը դնի օրգանիզմի ինքնասառեցման մեխանիզմները (ինչպիսին է քրտնարտադրութիւնը) եւ կարող է յանգեցնել մարմնի ջերմաստիճանի հետագայ իջեցման. մարդը կը սկսի քրտնել եւ սառեցնել ինքն իրեն:

Պատճառներ, թէ ինչու մարդը չի յիշում մանկութիւնը

Մանկութեան յիշողութիւնների կորուստը կարող է կապուած լինել մարդու անհատական յատկանիշերի, կեանքի հանգամանքների, իսկ կարճաժամկէտ յիշողութեան կորստի դէպքում՝ հոգեկան վիճակի հետ: Այս մասին ասել է հոգեբան Ստանիսլաւ Սամբուրսկին:

Ըստ նրա՝ հոգեբանութեան մէջ կան մի քանի տեսութիւններ ու վարկածներ, որոնք փորձում են բացատրել այս երեւոյթը:

«Մանկութիւնը մոռանալու հնարաւոր պատճառներից մէկը տրաւման է: Եթէ անձը մանկութեան տարիներին ունեցել է որոշ բացասական կամ տրաւմատիկ իրադարձութիւններ, ինչպիսիք են ֆիզիկական կամ էմոցիոնալ բռնութիւնը, ահաբեկումը կամ սիրելիների կորուստը, ապա նա կարող է ենթագիտակցօրէն ճնշել այդ յիշողութիւնները, որպէսզի պաշտպանւի ցաւից եւ տառապանքից: Սա կոչւում է փսիխոգեն ամնեզիա»,- ըստ shantnews-ի՝ պարզաբանել է նա:

Հոգեբանը նշել է, որ փսիխոգեն ամնեզիան յիշողութեան խանգարում է, որի դէպքում մարդը չի կարողանում յիշել իր կեանքի որոշակի ժամանակահատուածներ կամ իրադարձութիւններ՝ կապուած հոգեբանական ստրեսի կամ տրաւմայի հետ:

«Սա կարող է լինել ամբողջական կամ մասնակի մոռացում, ժամանակաւոր կամ երկարաժամկէտ: Հոգէոգեն ամնեզիան կարող է առաջանալ կամ մէկ տրաւմատիկ իրադարձութեան կամ քրոնիկական ստրեսի կամ բռնութեան հետեւանքով: Հոգեբանական պաշտպանութեան մեխանիզմն օգնում է մարդուն յաղթահարել այն սարսափը, որն ապրում է, օրինակ, երբ ծնողներն առանց պատճառի ապտակել են կամ աւագ դպրոցի աշակերտները գլուխը խցկել են զուգարանակոնքի մէջ: Մուտքագրէք այստեղ ցանկացած բան. ուղեղը կը փորձի ջնջել ցանկացած տրաւմատիկ իրադարձութիւն, որը սարսափ է առաջացրել: Սա անհրաժեշտ է ապրել շարունակելու համար»,- յաւելել է նա:

Սակայն դա չի նշանակում, որ այդ յիշողութիւններն ամբողջութեամբ անհետանում են ուղեղից: Դրանք կարող են վերականգնւել որոշակի պայմաններում, օրինակ՝ հոգեթերապիայի, հիպնոսի ժամանակ կամ որոշ հրահրող գործօնների ազդեցութեան տակ:

«Մանկութեան մոռացութեան միւս հնարաւոր պատճառն ընտրողականութիւնն է: Եթէ մարդ մեծ նշանակութիւն չի տալիս իր մանկութեանը կամ առանձնայատուկ կապուածութիւն չունի դրան, ապա նա կարող է պարզապէս ուշադրութիւն չդարձնել իր մանկութեան յիշողութիւններին ու չակտիւացնել դրանք իր մտքում: Սա կոչւում է ընտրովի մոռացում»,- ընդգծել է հոգեբանը:

Սամբուրսկին նշել է, որ ընտրովի մոռանալը գործընթաց է, երբ մարդը մոռանում է իր հետաքրքրութիւններին, նպատակներին, համոզմունքներին կամ ինքնագնահատականին չհամապատասխանող տեղեկութիւնը:

«Ընտրովի մոռացումը հոգեբանական յարմարողական մեխանիզմ է, որն օգնում է մարդուն կենտրոնանալ այն բանի վրայ, ինչն իր համար կարեւոր է եւ օգտակար ներկայում եւ ապագայում: Բայց նոյնիսկ ընտրովի մոռացութեան դէպքում յիշողութիւններն ամբողջութեամբ չեն ջնջւում: Դրանք կարելի է յիշել որոշակի հանգամանքներում, օրինակ՝ երեխաների ընկերների հետ հանդիպելիս, լուսանկարներ դիտելիս կամ գիրք կարդալիս»,- ամփոփել է Սամբուրսկին:

«Գէոպոլիտիկ...

(Շար. 5-րդ էջից)

«պրոեւրոպական» է, ինչո՞ւ ԵՄ-ն այդ քաղաքական որոշումը չի կայացնում, ներառեալ՝ ԵՄ անդամ պետութիւնների մակարդակով:

Նոյն անմխիթար վիճակն է նաեւ տարածաշրջանային գնահատականներում, որ տեղ են գտել այդ զեկոյցում: Չկայ գէթ մէկ թթու կամ կծու խօսք Ադրբեջանի շարունակւող ագրեսիայի, ուժի գործադրման սպառնալիքների մասին: Իսկ Արցախի հայաթափումը բնութագրւած է EXODUS՝ ելք, տերմինով, որի մասին մի քիչ ուզում եմ մանրամասնել:

Մաքուր եւ աներկբայ էթնիկ զտումը, որ Ադրբեջանն իրականացրեց Արցախում, EXODUS բառով փոխարինելը եւրոպական ռեւերանս է Ադրբեջանի նկատմամբ, որովհետեւ դա չի ենթադրի իրաւական կամ քաղաքական պատժիչ քայլեր Ալիեւի նկատմամբ, այսինքն՝ Հայաստանին սատարող ԵՄ-ն իրականում խուսափում է սատարել մեզ ամենակարեւոր եւ կենսական հարցերում: Աւելին, EXODUS եզրոյթը կրկնում է Աստուածաշնչեան այն դրրւագը, երբ հրեաները լքեցին Եգիպտոսը, եւ սա խորը թիւրիմացութիւն է առաջացնում: Հրեաների ելքը Եգիպտոսից դրական երեւոյթ էր նրանց կեանքում, որովհետեւ նրանք պատանդ էին Եգիպտոսում, իրենց հայրենիքում չէին եւ վերադարձան իրենց իրական հողերը: Հրեաները պայքարում էին, որ լքեն Եգիպտոսը, EXODUS-ի իրաւունք ունենան: Այնինչ Արցախի հայերը գտնւում էին իրենց հայրենիքում եւ պայքարում էին ոչ թէ այն լքելու, այլ այնտեղ ապրելու հնարաւորութեան համար: Հրեաների EXODUS-ը փաստացի հայրենադարձութիւն էր, իսկ հայերի՝ Արցախից ստիպւած հեռանալը՝ հայրենազրկում:

Այսինքն՝ անգամ արժէքային, իմաստային, բովանդակային առումով Արցախի հայաթափումը EXODUS կոչելը չի բխում ո՛չ իրականութիւնից, ո՛չ էլ հայկական շահից: Էլ չասեմ, որ նոյն Հայաստան-ԵՄ շրջանակային համաձայնագրով ամրագրւած են Արցախեան հակամարտութեան կարգաւորման սկզբունքները, այդ թւում՝ Արցախի ժողովրդի ինքնորոշման իրաւունքը, որի ոտնահարումը այժմ հանդուրժւում է եւ փաստացի խրախուսւում է ԵՄ-ի կողմից:

Այո՛, ցաւօք, աշխարհը գտնւում է գէոպոլիտիկ պատերազմի մէջ, եւ կողմերից իւրաքանչիւրն ուզում է ուժեղանալ՝ ներգրաւելով նոր ռեսուրսներ: Սակայն Հայաստանի իրական բարեկամները Եւրոպայում չեն կարող չհասկանալ, որ գիգանտների այդ ճակատամարտում Հայաստանի արկածախնդիր ներգրաւումը յղի է լրջագոյն էքզիստենցիալ խնդիրներով հայ ժողովրդի համար՝ հաշւի առնելով Հարաւային Կովկասի իւրայատկութիւնները:

Հայաստանի իրական բարեկամները Եւրոպայում չեն կարող չնկատել նաեւ, որ Հայաստանի գործող ռեժիմն իրականում չի իրացնում երկրի բարեփոխումների, դեմոկրատիզացիայի, մոդեռնիզացիայի օրակարգերը, որ Հայաստան-ԵՄ շրջանակային համաձայնագիրը իրականում այս փուլում շատ մօտ է տապալմանը: Վերջիվերջոյ, Աֆղանստանի մոջահեդներն էլ էին հակառուսական, սակայն ոչ մէկի մտքով չէր անցնի նրան «պրոեւրոպեան» կոչելը:

Հայաստանն այսօրւայ վիճակում գէոպոլիտիկ իմաստով նման է հաշմւածի կամ ուշադրութեան կարիք ունեցող եւ խոցելի երեխայի, որոնց ոչ մի դէպքում չի կարելի ներգրաւել պատերազմների մէջ, անգամ՝ գէոպոլիտիկ: Սա ցանկացած պատերազմի գրւած եւ չգրւած օրէնք է:

Հայաստան-ԵՄ իրական գործընկերութիւնն ունի իր ճշգրիտ եւ առաջնահերթ օրակարգը՝ զերծ գէոպոլիտիկ տենդի դրսեւորումներից: Այդ օրակարգը պէտք է ներառի, օրինակ, Ադրբեջանի դէմ պատժամիջոցների կիրառման քննարկումներ, վիզայի ազատականացում, Հայաստան-ԵՄ շրջանակային համաձայնագրի խորքային, ոչ թէ իմիտացիոն իմպլեմենտացիա, եւրոպական թիրախային ծրագրերի իրականացում տարբեր ոլորտներում:

Այս շարքը կարելի է շարունակել՝ յիշելով, որ ցանկացած բումի հետեւանքով առաջացող փուչիկները մի օր պայթում են՝ վնասելով բոլոր կողմերին: Ծաւալւած գէոպոլիտիկ պայքարում ԵՄ-ի նպատակը յաղթելն է, իսկ մերը՝ ընդամէնը ֆիզիկապէս վերապրելը...»,- գրել է Աշոտեանը:

News.am

ԱՐԵՒԱԳԱԼԻ ԵՒ ՀՍԿՈՒՄԻ ԱՐԱՐՈՂՈՒԹԻՒՆՆԵՐ՝ ԹԵՀՐԱՆԻ ԵԿԵՂԵՑԻՆԵՐՈՒՄ ՄԵԾ ՊԱՀՈՑ ԱՌԻԹՈՎ

Եկեղեցու փօնացոյցը յիշեցնում է մեզ, որ արդէն Մեծ Պահքի սեմին ենք:

Քրիստոնէական եկեղեցու կեանքում **Մեծ Պահքը գեղեցկագոյն առիթն է, որ հաւատացեալներին մղում է աղօթքով, պահեցողութեամբ եւ եկեղեցական արարողութիւնների մասնակցութեամբ՝ վերանորոգութեան եւ հաւատքի վերակենսաւորման:**

Առ այդ Մեծ Պահոց առաջին շաբաթից՝ հինգշաբթի, 15 փետրուարի 2024-ից սկսեալ Թեհրանի մեր եկեղեցիներում կատարուելու է առաւօտները՝ Արեւագալի եւ երեկոները՝ Խաղաղական ու Հանգստեան ժամերգութիւններն ըստ հետեւեալ ժամանակացոյցի.-

Ա- Ամէն չորեքշաբթի եւ ուրբաթ օրերին՝ Արեւագալի ժամերգութիւն՝ բոլոր եկեղեցիներում, առաւօտեան ժամը 9:00-ին, իսկ երկուշաբթիից-ուրբաթ երեկոները Խաղաղական ու Հանգստեան ժամերգութիւններ:

Բ- Ամէն երկուշաբթի օրերին՝ հերթաբար մեր բոլոր եկեղեցիներում տեղի է ունենալու Արեւագալի ժամերգութիւն առաւօտեան ժամը 9:00-ին ըստ հետեւեալ ժամանակացոյցի.-

1-Երկուշաբթի, մարտի 4-ին, 2024, առաւօտեան ժամը 9:00-ին՝ **Սրբ. Վարդանանց եկեղեցի:**

2-Երկուշաբթի, մարտի 11-ին, 2024, առաւօտեան ժամը 9:00-ին՝ **Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցի:**

3-Երկուշաբթի, մարտի 18-ին, 2024, առաւօտեան ժամը 9:00-ին՝ **Ս. Թարգմանչաց եկեղեցի**:

Կոչ ենք ուղղում մեր սիրելի հաւատացեալ ժողովրդի զաւակներին, որ ներկայ լինեն վերոյիշեալ արարողութիւններին, որպէսզի մեր հայրերի ապաշխարողական աղօթքներով, շարականներով եւ հոգեւոր երգերով առաւել եւս զօրանան իրենց հաւատքում:

ԳԻՒԱՆ ԿՐՕՆԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԹԵՀՐԱՆԻ ՀԱՅՈՑ ԹԵՄԻ

ՑԱՒԱԿՑԱԿԱՆ

Այսու իմ խորագոյն ցաւակցութիւնն եմ յայտնում՝ Լիղա, Ռազմիկ եւ Ռաֆֆի Զարիֆեաններին, Զարիֆեան ընտանիքին եւ միւս բոլոր հարազատներին, իրենց կրած ծանր ու անփոխարինելի կորստի՝

ՀՐԱՉ ԶԱՐԻՖԵԱՆԻ

ցաւալի մահուան առթիւ:

ԻՐԱՆԻ ԻՍԼ. ԽՈՐՀՐԴԱՐԱՆՈՒՄ ԹԵՀՐԱՆԻ ԵՒ ՀԻՒՍԻՍԱՅԻՆ ԻՐԱՆԱՀԱՅՈՒԹԵԱՆ ՊԱՏԳԱՄԱՒՈՐ ԱՐԱ ՇԱՀՎԵՐԴԵԱՆ



Յարգելի նուիրատու

Շնորհակալ ենք Քո սրտաբուխ նուիրատուութեան համար:

«ԱԼԻՔ»-ի սիրտը բաբախում է Քո եւ սրտակից ընթերցողների շնորհիւ:

Այս դժուարին պայմաններում Դուք ներշնչում էք մեզ աւելի հաւատք մեր գործին եւ աշխատելու նոր եռանդ, որպէսզի «ԱԼԻՔ»-ը ամէն օր մուտք գործի Ձեր տուն:

Շնորհակալ ենք, որ Դուք կայք:

Յարգանօք՝
«ԱԼԻՔ» օրաթերթի
Յայտարարութիւնների բաժին

Computer AGMA
Համակարգչային ընկերութիւն
خرید و فروش کامپیوتر
ارتقاء سیستم
سرویس در محل
سخت افزار
نرم افزار
شبکه
Tel: 88849305 & 88842385
ایرانشهر شمالی، کوچه نوشهر، پلاک ۳۲، واحد ٦

ՈՒՇԱԴՐՈՒԹԻՒՆ

Այսու ազգային մարմինների, հիմնարկութիւնների, միութիւնների, դպրոցների եւ ընկերութիւնների ու բոլոր յարգելի ընթերցողների ուշադրութեանն ենք յանձնում, որ իրենց

յայտարարութիւնները օրաթերթիս յանձնեն առ. ժամը 8-ից մինչեւ կ. յ. ժամը 2-ը ամենաուշը երեք օր (աշխատանքային օր) նախքան տպագրութեան թւականը,

բացի

մահազդերից,

որոնք ընդունւում են նաեւ նոյն օրը առաւօտեան՝ մինչեւ ժամը 9-ը:

«ԱԼԻՔ» ՕՐԱԹԵՐԹ

ԱԼԻՔ
Օրաթերթ
Արտօնատէր՝ ԱԼԲԵՐՏ ԱՃԵՄԵԱՆ
Հեռախօս՝ (0098-21) 88768567 - 88761154
Հեռապատճէն՝ 88760994
Փոստարկղ՝ 11365-953 Թեհրան - Իրան

آلیک
روزنامه سیاسی، اجتماعی، ادبی و هنری
صاحب امتیاز: موسسه جمعیت ادبی آلیک
مدیر مسئول: آلبرت عجمیان
خیابان سهروردی شمالی، خیابان شهید محبی، پلاک ۱۶
کدپستی: ۱۵۵۸۸۳۳۹۱۱
تهران صندوق پستی: ۹۵۳-۱۱۳۶۵ فاکس: ۸۸۷۶۰۹۹۴
تلفن: ۸۸۷۶۱۱۵۴ – ۸۸۷۶۸۵۶۷ چاپخانه آلیک

ALIK ARMENIAN DAILY
Add.: 16, Shahid Mohebi Ave., North Sohravardi Ave.,
Tehran 1558833911, Iran P. O. Box: 11365-953
Tel.: (0098-21) 88768567 -88761154
Fax: 88760994
E-mail : info@alikonline.ir
www.alikonline.ir

ԱՄԷՆ ՏԵՍԱԿԻ
ԼՒԱՑՔԻ ԵՒ ԱՄԱՆ ԼՒԱՑՈՂ
ՄԵՔԵՆԱՆԵՐԻ ՆՈՐՈԳՈՒՄ
ԲՆԱԿԱՐԱՆՈՒՄ
Հեռ. 26320084 եւ 09124187835,
Վահիկ Իսկանդարեան

ԱԼԻՔ-ի
Internet-ային էջն է՝
www.alikonline.ir

سفر دوستان قرن
SAFAR DOUSTAN GHARN
TOUR & TRAVEL AGENCY
هواپیمایی قشم ایر
Qeshm Air
نمایندگی رسمی هواپیمایی قشم ایر
شرکت خدمات مسافرتی و جهانگردی سفردوستان قرن
Թռիչքներ է իրականացնում
երկուշաբթի եւ հինգշաբթի օրերը՝
դէպի Հայաստան եւ վերադարձ
ԹԵՀՐԱՆ - ԵՐԵՒԱՆ - ԹԵՀՐԱՆ
تهران، خیابان شهید بهشتی، بین بزرگراه مدرس و قائم مقام، پلاک ۲۷۱، طبقه همکف
WWW.SAFARDOUSTAN.COM
۸۸۵۱۴۰۵۰

Արդեօք մինչ այժմ «Սիրոյ ծառ» ցանե՞լ էք
آیا تا به حال درخت عشق کاشته اید؟

Ձեր սիրոյ եւ գթութեան սերմերը ցանէք «Մահաք»-ում, որպէսզի դրանց մրգերը առողջութիւն հանդիսանան քաղցկեղով հիւանդ հազարաւոր մանուկների համար:

Ձեր տնկած ծառի հովանու ներքոյ՝ մանուկները կարող կը լինեն ապագային յոյսով նայել:

Ամսական կարգով վճարելով քաղցկեղով հիւանդ մէկ մանուկի դեղորայքի եւ բուժման ծախսը՝ միացէք «Մահաք»-ի մեծ ընտանիքին:

Համագործակցութեան հեռախօսահամար՝ 021-23540

از اینکه به پیام ما توجه کردید، سپاس گزاریم.
برای بازدید از بیمارستان محک که حاصل عشق شماست، با شماره ۰۲۱-۲۳۵۰۱۲۱۰ تماس بگیرید.

محک
مؤسسه خیریه حمایت از کودکان مبتلا به سرطان
mahak-charity.org

Դեսպան Սոբհանին Շիրակի մարզպետի հետ քննարկել է մի շարք ոլորտներում հնարաւոր համագործակցութեանն առնչւող հարցեր

«ԱԼԻՔ» - ՀՀ-ում Իրանի Իսլամական Հանրապետութեան արտակարգ եւ լիազօր դեսպան Մեհդի Սոբհանին եւ նրա գլխաւորած պատուիրակութիւնն այցելել են Շիրակի մարզ։

Այս մասին ըստ Tert.am-ի՝ հաղորդագրութիւն է տարածել Շիրակի մարզպետարանի աշխատակազմը։

Հանդիպման ընթացքում կողմերը քննարկել են գիւղատնտեսութեան, կրթութեան, մշակոյթի, սպորտի բնագաւառներում հնարաւոր համագործակցութեանն առնչւող հարցեր, պայմանաւորուածութիւն է ձեռքբերուել կրկին հանդիպելու՝ փոխադարձ հետաքրքրութիւն ներկայացնող հարցերի շուրջ գործնական քայլեր ձեռնարկելու համար։

«Հայկական....

(Շար. 1-ին էջից)

դիւանագիտութեան ողջ աշխատանքը եւ համակերպել ու ընդունել է, որ հայ-ադրբեջանական յարաբերութիւնները ամբողջովին փոխկապակցած են Թուրքիայի հետ յարաբերութիւնների հետ, ընդունում են թուրքական նախապայմանները եւ պատրաստ են հնազանդօրէն խաղի այդ կանոններով քարշ գալ։

Դեռ որքան դիւանագիտական ջանք ու աշխատանք է պահանջւելու, որ հնարաւոր լինի (եթէ հնարաւոր կը լինի) ուղղել սխալները։

Սիրելի դիւանագէտ ընկերնե՛ր, շնորհաւորում եմ ձեր տօնը։

Այսօր խոստացէք, որ անգրագէտների հեռացումից յետոյ, Հայրենիքի կանչով, նեղացուածութիւնը մի կողմ էք դնելու ու նորից շարք էք վերադառնալու, որ ներքին թշնամու ու անգրագէտի աւերը շտկէք, շտկենք միասին։

Յ.Գ. լուսանկարներում՝

• 1992 թ. մարտի 2, Նիւ Եորքում, ՄԱԿ-ի կենտրոնակայանի դիմաց պաշտօնապէս բարձրացւում է Հայոց Եռագոյնը։

• 2018 թ. յունիսի 29, Վաշինգտոնում ՀՀ դեսպանատան մօտ ԱՄՆ-ում 1918-1920 թւականներին Հայաստանի առաջին դեսպան Արմէն Գարոյի (Գարեգին Փաստրմաջեան) կիսանդրիի բացման արարողութիւնը»։

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Օժանդակելու համար օրաթերթիս՝ կարող էք ձեր հին թղթերը յանձնել

«Ալիք» օրաթերթին՝ առաւօտեան ժամը 8-ից մինչեւ ժամը 20:00-ը

(Մեծ քանակութեան պարագայում՝ նախապէս համադրելու խնդրանօք)՝ հեպեւեալ հասցէով.

Հիւսիսային Սոհրեւարդի պող., Մոհեբի փողոց, համար 16

Հեռ.՝ 88761154

«ԱԼԻՔ» ՕՐԱԹԵՐԹ

Երկու տարբեր թռիչքներ դէպի՝ Հայաստան

ԹԵՀՐԱՆ - ԵՐԵՒԱՆ - ԹԵՀՐԱՆ

IRAN AIRTOUR AIRLINES — Qeshm Air

برای تهیه بلیط می توانید با

شرکت حمل و نقل بین المللی و مسافرتی ستی

۰۲۱-۸۸۵۴۱۲۴۲-۵ و ۸۸۵۴۱۲۹۸-۹ agency@sati-co.com

و در شهر اصفهان با آژانس آرمان گشت «ناربه ژاردن» ۰۹۱۳۳۰۰۸۰۲۹

و شباهنگ سیر «رافیک خداوردیان» ۰۹۱۳۳۰۵۳۸۳۵ تماس حاصل نمایید.

«ԲԱԶԷ» ՃԱՄԲՈՐԴԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆ

آژانس مسافرتی «بازه»

BAZE TOUR & TRAVEL AGENCY

Հասցէ՝ Կոմիտաս 20, բն. 22, Երեւան, Հայաստան

Հեռախօս՝ +374 965 75 305 եւ + 374 102 22 824

نشانی: خیابان کومیتاس، شماره ۲۲، ایروان – ارمنستان تلفن: ۸۲۴ ۲۲ ۱۰۲ ۳۷۴+ , ۳۰۵ ۷۵ ۹۶۵ ۳۷۴+

Address: Komitas St., Bld.20, Apt. 22 E-mail: info@bazetravel.am

Սերգէյ Լաւրով.

«Ցաւում ենք, որ ՀՀ-ն գիտակցւած որոշում է կայացրել հետեւողականօրէն գնալ ՌԴ-ի հետ յարաբերութիւնների վատթարացման ուղղութեամբ»

Մոսկւան ցաւում է, որ Երեւանը որոշեց վարել Ռուսաստանի Դաշնութեան հետ յարաբերութիւնները վատթարացնելու եւ Ղարաբաղի հարցում Մոսկւային մեղադրելու քաղաքականութիւն։ Այս մասին ասել է ՌԴ ԱԳ նախարար Սերգէյ Լաւրովը, փոխանցում է«ՌԻԱ Նովոստի»-ին։

«Ցաւում ենք, որ Հայաստանի ղեկավարութիւնը, ըստ երեւոյթին, գիտակցւած որոշում է կայացրել հետեւողականօրէն գնալ Ռուսաստանի Դաշնութեան հետ յարաբերութիւնների վատթարացման ուղղութեամբ՝ մեղադրելով Ռուսաստանին այն ամենի համար, ինչ տեղի ունեցաւ Լեռնային Ղարաբաղի հետ, իհարկէ, դա դաշնակցային ձեւ չէ», - ասել է Լաւրովը։

Նա յիշեցրել է՝ Ռուսաստանն էր, որ դադարեցրեց պատերազմը Լեռնային Ղարաբաղում, եւ պատերազմը կարող էր դադարել աւելի վաղ։

«Երբ ադրբեջանցիները դեռ չէին գրաւել Շուշին, այն ժամանակ Նիկոլ Փաշինեանը, ի պատասխան Վլադիմիր Պուտինի կոչերին, ասաց՝ ոչ, մենք պայքարելու ենք մինչեւ վերջ։ Դէ, խնդրեմ», - ասել է Լաւրովը։

Yerkir.am

Նիկոլայ Բորդիւժա.

«ՀԱՊԿ-ում ՀՀ-ի մասնակցութեան դէ իւրէ «սառեցումը» կը սահմանափակի երկրի անվտանգութեան ապահովումը»

Երբ Հայաստանը քննարկում է ՀԱՊԿ-ին մասնակցութեան իրաւական կասեցման հարցը, երկիրը կարող է բախւել կազմակերպութիւնում ձայնի իրաւունքի կորստի եւ ՀԱՊԿ-ից լիարժէք պաշտպանութիւնը կորցնելու վտանգի առաջ։

Այս մասին «ՌԻԱ Նովոստի»-ին տւած հարցազրոյցում ասել է ՀԱՊԿ նախկին գլխաւոր քարտուղար Նիկոլայ Բորդիւժան։

«Եթէ Հայաստանը, այնուամենայնիւ, դադարեցնի իր անդամակցութիւնը կազմակերպութեանը, նա այլեւս չի մասնակցի որոշումների կայացման գործընթացին եւ ՀԱՊԿ միջոցառումներին, որոնք իրականացւում են ընդհանուր անվտանգութեան ամրապնդման նպատակով։

Սա նշանակում է, որ այն առայժմ սառեցւած ռեժիմում է լինելու, այդ թւում՝ անվտանգութեան համակարգի հետ կապւած»,-նշել է Բորդիւժան։

Նա յաւելել է, որ եթէ նման սցենարն իրագործւի, ապա հաւանականութիւնը, որ կազմակերպութիւնը ինչ-որ կերպ Հայաստանի վրայ կը տարածի անվտանգութեան բոլոր համակարգերը, մեծապէս կը կրճատւի։ Նա նաեւ կասկած է յայտնել, որ Հայաստանը կը կարողանայ իրեն ապահովել այլընտրանքային անվտանգութեան համակարգով։

Միաժամանակ ՀԱՊԿ նախկին գլխաւոր քարտուղարը գործակալութեանը յիշեցրել է, որ ՀԱՊԿ-ում մասնակցութեան պաշտօնական կասեցման մեխանիզմը գոյութիւն ունի եւ նախկինում արդէն կիրառւել է։

SET Coffee

فروشگاه: هفتم تیر، قائم مقام فراهانی، خیابان فجر، پلاک ۱۰

کارخانه: شهرک صنعتی خوارزمی، بلوار هاگنولیا، پلاک A117

0936-6726563

021-88305827

www.set-coffee.com

قهوه ست

«Օշ Դոռնա»

اوج درنا

օդանաւային ընկերութիւն

آژانس هواپیمایی اوج درنا

با بیش از ۲۵ سال تجربه

تور و ویزای اروپا و انگلیس

صد در صد تضمینی

امریکا کانادا استرالیا کل اروپا و آسیا

فروش بلیط با بهترین نرخ در مسیرهای

آدرس: خیابان مطهری، نرسیده به لارستان، پلاک ۴۵۸

تلفن: ۸۸۸ ۹۴ ۲۲۲

۸۸۹ ۲۶ ۱۱۱

۰۹۹۱ ۳۲۳ ۱۳ ۲۰

مارلنه شاهبنده

@OUJ.DORNA

املاک هنرمندان

● بزرگترین آژانس مسکن مرکز شهر تهران (منطقه ۶)

● خانه های قدیمی تخصص ماست

آدرس: میدان هفت تیر، کریمخان، خردمند شمالی، نبش دی، ساختمان ۱۱۹، پلاک ۴

تلفن: ۸۸۸۴۵۵۶۶ – ۸۸۸۴۵۵۷۷

واتس آپ: ۰۹۱۲۹۵۸۵۱۴۰

مدیر داخلی (هماهنگی): ۰۹۳۰۹۲۱۳۷۲۴

مدیریت: ۰۹۱۹۴۳۱۸۳۱۹ امیر قربانی

ՔԱՐԻՄԻ

Գորգերի, սառնարանների եւ գազ սպառող զովամուղի, կահոյքի եւ անտիկ իրերի լաւագոյն գնորդ

خریدار فرش، یخچال فریزر، کولر گازی، مبلمان، خرده ریز و لوازم آنتیک

Հեռ.՝ 88594063 եւ 09 12 11932 12

«Արարատ»

Ամէն տեսակ տնային իրերի գնորդ

سماور ذغالی، نقره جات، ظروف مسی، چراغ لاله و لوستر، رادیو لامپی ، رادیوگرام مبله، صفحه گرام ، لوازم چوبی آنتیک و خرده

Հեռ.՝ 88523388

Թուրքագէտ.

«Արեւմուտքի կողմից ՀՀ-ի հասցէին արւող ռեւերանսները Թուրքիայի եւ Ադրբեջանի հետ յարաբերութիւնների համեմատ «գրոշի արժէք չունեն»»

Կայ պարզ իրողութիւն, որը շատերը չեն ուզում ընդունել կամ յատուկ չեն ընդունում։ Այս մասին գրում է թուրքագէտ Վարուժան Գեղամեանը։

«Հարաւային Կովկասում Եւրոմիութեան եւ ՆԱՏՕ-ի միակ իրական գործընկերը Թուրքիան է։

Չնայած Թուրքիայի հետ ունեցած բոլոր խնդիրներին՝ հաւաքական Արեւմուտքը հէնց այս երկրին է տեսնում որպէս Կովկասում եւ Կենտրոնական Ասիայում իր ներկայացուցիչ, որի հետ նշած տարածաշրջաններում կայ ընդհանուր շահ։

Դեռեւս 19-րդ դարից այդ շահը շատ յստակ ձեւակերպում է ստացել. դուրս մղել Ռուսաստանին նշած զօտիներից, որը Թուրքիայի համար ազգային-պետական գլխաւոր նպատակներից է։

Հէնց այս պատկերացմամբ էր առաջնորդւում մարտի 1-ին Անթալիայի դիւանագիտական ֆորումի ժամանակ Հարաւային Կովկասում ԵՄ ներկայացուցիչ Տոյո Կլաարը, երբ նշում էր, որ «Թուրքիան է տարածաշրջանի առաջատար ուժը» եւ պէտք է տարածաշրջանային նոր պայմանագրերի միջոցով «ցեմենտի իր այդ դերը»։

Արեւմուտքի կողմից Հայաստանի հասցէին արւող առանձին ռեւերանսները ոչ միայն մակերեսային են, այլեւ Թուրքիայի եւ Ադրբեջանի հետ յարաբերութիւնների համեմատ «գրոշի արժէք չունեն» եւ զոհաբերւելու են յանուն դրանց։ Աւելին, այդ ռեւերանսներն արւում են որպէս այդ զոհաբերութեան մաս»,- գրել է նա։

Yerkir.am